# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք.Երևան «01» Փետրվարի 2017թ.

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ , այսուհետ «Հրատարակիչ», ի դեմս տնօրեն Արթուր Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Մկրտիչ Շավարշի Կարապետյանը (անձնագիր AM 044081 տրված 07.09.2011թ. 001-ի կողմից). Այսուհետ՝ «Հեղինակ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը Հրատարակչին է տրամադրում «Ինտերակտիվ Այբբենարան CD» արևմտահայերեն և արևելահայերեն էլեկտրոնային գրքի, այսուհետ՝ «Ստեղծագործություն», բովանդակության աշխատանքները:

1.2. Հրատարակիչը ստանձնում է, իրականացնել պայմանագրի առարկայի հրատարակման և իրացման աշխատանքները:

1.3. Հեղինակը Հրատարակչին է փոխանցում Ստեղծագործության օգտագործման բացառիկ իրավունք, հետևյալ ձևերով՝

1.3.1. Ստեղծագործության վերարտադրում (վերարտադրության իրավունք),

1.3.2. Ստեղծագործության նմուշների տարածում ցանկացած ձևով՝ վաճառք, նվիրատվություն և այլն (տարածման իրավունք),

1.3.3. Տարածման նպատակով Ստեղծագործության նմուշների արտահանում (արտահանման իրավունք),

1.3.4. Ինտերնետ ցանցով ցուցադրում և վաճառք (Ինտերնետ ցանցով ցուցադրման և վաճառքի իրավունք):

## 2. Իրավունքի հանձնման ժամկետը

Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները Հեղինակի կողմից փոխանցվում են Հրատարակչին 20 (քսան) տարի ժամկետով՝ սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:

## 3. Իրավունքի կիրառման տարածքը

Սույն պայմանագրի համաձայն, Հրատարակիչը իրավունք ունի իրեն հանձնված իրավունքները օգտագործել ՀՀ տարածքում և դրանից դուրս:

## 4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար Հրատարակիչը պարտավորվում է Հեղինակին վճարել վարձատրություն՝ հեղինակային աշխատանքների հոնորար, 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

4.2. Վճարումը կատարվում է սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց 30 աշխատանքային օր հետո:

## 5. Կողմերի պարտավորությունները

5.1. Հրատարակիչը պարտավոր է՝

5.1.1. պայմանագրի առարկային վերաբերող պահանջները և չափանիշները ժամանակին ներկայացնել Հեղինակին,

5.1.2. իրականացնել Հեղինակի ստեղծած պայմանագրի առարկային առնչվող տնտեսական, տեխնիկական, արտադրական և կազմակերպչական խնդիրների լուծումը:

5.2. Հեղինակը պարտավոր է՝

5.2.1. սույն պայմանագրին համապատասխան կատարել պայմանագրի առարկայի ստեղծման հեղինակային պարտականությունները,

5.2.2. պայմանագրի առարկայի նյութերը (ձեռագրերը, սևագրերը, դիսկետները և այլն) /գույքային բացառիկ իրավունքները/ ամբողջությամբ հանձնել Հրատարակչին,

5.2.3. Հրատարակչի պահանջով, տրամադրված նյութերում վերջինիս կողմից հայտնաբերված թերությունները վերացնել 3 օրվա ընթացքում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերից որևէ մեկը պայմանագրի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել պատճառված վնասները:

6.2. Կողմերի միջև առաջացած և սույն պայմանագրով չկարգավորված վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

6.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.4. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6.5. Հետագայում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր, և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7. Կողմերի իրավաբանական հասցեները

| Հրատարակիչ | Հեղինակ |
| --- | --- |
| «Էդիթ Պրինտ» ՍՊԸ | Մկրտիչ Շավարշի Կարապետյան |
| Ք.Երևան, Թումանյան 12 բն.3 | ք.Երևան, Լենինգրադյան 20շ. բն. 35 |
| ՀՎՀՀ 00009253 | անձն. AM044081 |
| ՀՀ 16600 00243060100 | տրված 07.09.2011թ. 001-ի կողմից |
| «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ | ս/ք 2005580724 |

Տնօրեն Ա.Գալստյան Հեղինակ Մ.Կարապետյան

«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» «ЭДИТ ПРИНТ» «EDIT PRINT» 00009253